



Funded by the European Union

## ԵՄ ԿԱՆԱՀ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՆԵՐՈՒԹԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԴԱՅԱՍԱՆՈՒՄ (ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ)



### ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- UNIDO United Nations Industrial Development Organization (ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպություն)
- EaP Eastern Partnership (Արևելյան գործընկերություն)
- SMGP Single Market for Green Products (Կանաչ արտադրանքների միասնական շուկա)
- LCT Life cycle thinking (Կյանքի ցիկլային մտածողություն)
- LCA Life-cycle assessment (Կյանքի ցիկլային գնահատում)
- LCI Life cycle inventory (Կյանքի ցիկլի գույքագրում)
- PEF Product environmental footprint (Արտադրանքի բնապահպանական հետք)
- OEF Organisation Environmental Footprint (Կազմակերպության շրջակա միջավայրի հետք)
- PEFCR Product Environmental Footprint Category Rules (Արտադրանքի շրջակա միջավայրի հետքի կատեգորիայի կանոններ)
- OEFSSR Organisation Environmental Footprint Sector Rules (Կազմակերպության բնապահպանական հետքի ոլորտի կանոններ)

### ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական միության (ԵՄ) «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (UNIDO) ներկայացնում է ԵՄ Կանաչ արտադրանքների միասնական շուկա (SMGP) նախաձեռնությունը Արևելյան գործընկերության (EaP) տարածաշրջանում: Արտադրանքի բնապահպանական հետքի (PEF) մեթոդաբանության ներկայացման նպատակն է օգնել ընկերություններին չափել իրենց բնապահպանական արդյունավետությունը և վստահորեն դիրքավորվել կայուն արտադրանքի շուկայում: Հայաստանում և ԱԳ այլ երկրներում UNIDO-ն շեշտադրում է նաև Արտադրանքի բնապահպանական հետքի ներդրման գործում առկա փորձառությունների և խոչընդոտների քարտեզագրումը՝ համեմատելով պիտակավորման առկա սխեմաների հետ: Նախաձեռնության նպատակն է Արտադրանքի բնապահպանական հետքի ներդրման միջոցով բարձրացնել SMGP նախաձեռնության հնարավորությունների և օգուտների շուրջ իրազեկվածության մակարդակը և ճանապարհի հարթել պիլոտային ծրագրի համար խթանելով PEF կիրառումը ընտրված ոլորտներում:

Այս տեղեկատվական նյութը PEF-ին ուղղված ռեսուրսներից է, որը ստեղծվել է «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի շրջանակներում խթանելու SMGP պրակտիկան Հայաստանում: Այս տեղեկատվական նյութը ընդգծում է երկրում ԵՄ SMGP զարգացման կարևորությունը երկրի հաստատությունների և մասնագետների համար, ինչպես նաև ներկայացնում է SMGP պատրաստակամությունը, նախադրյալները, և հնարավոր օգուտները Հայաստանում PEF-ի իրականացման համար:

### ԵՄ «ԿԱՆԱՀ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ»

Եվրոպական հանձնաժողովը 2013 թվականին ներկայացրել է ԵՄ «Կանաչ արտադրանքների միասնական շուկա» նախաձեռնությունը, որի նպատակն է աջակցել եվրոպական շուկա մուտք գործող ապրանքների/ընկերությունների շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման համար արդար մրցակցային դաշտի ստեղծմանը: Նախաձեռնությունը ներառում է արտադրանքի և կազմակերպության շրջակա միջավայրի հետքի (PEF և OEF) մեթոդների կիրառումը ուղղորդելով ընկերություններին հիմնավորել էկոլոգիապես մաքուր լինելու իրենց պնդումները: Ի լրումն, այն նաև նպաստում է արտադրանքի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հարցում ձեռնարկությունների միասնական մոտեցմանը հետևելուն՝ միաժամանակ տրամադրելով ճիշտ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է տեղեկացված որոշումներ կայացնելու և սպառողների բնապահպանական ազդեցությունների մասին թեմաների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու համար: ԵՄ SMGP նախաձեռնության նպատակներից է նաև էկոլոգիապես պատասխանատու տնտեսական աճի խթանումը:

### ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԵՏՔ (PEF)

PEF<sup>1</sup> մեթոդը ապահովում է արդար մրցակցություն արտադրողների միջև և բարելավում է արտադրանքի բնապահպանական արդյունավետության համեմատելիությունն ու հաղորդակցությունը: Եվրոպական հանձնաժողովը առաջարկել է PEF մեթոդը որպես ստանդարտ միջոց՝ գնահատելու և չափելու արտադրանքի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կյանքի ցիկլի ընթացքում (հումքի արդյունահանումից մինչև արտադրություն, տեղափոխում, օգտագործում և հեռացում): Արտադրանքի բնապահպանական հետքի մեթոդաբանությունը թույլ է տալիս հաշվել արտադրանքի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները 16 ազդեցության դասակարգերի: Այդ դասակարգերը ներառում են կլիմայի փոփոխությունը, թթվալյանացում, էվտրոֆիկացիա, ռեսուրսների օգտագործումը և այլն:<sup>2</sup> Ազդեցության տարբեր կատեգորիաների արդյունքներն այնուհետև ստանդարտացվում և բազմապատկվում են կշռման փոփոխականներով՝ ապահովելու կատարողականի մեկ միավոր: Այս ամենը միասին կազմում են արտադրանքի PEF պրոֆիլը: Առավել ճշգրիտ մոդելավորման հնարավորություն տալու և նույն կատեգորիայում ապրանքների միջև համեմատելիություն ու հեռանկիչ ապահովելու համար ներդրվել են PEF կատեգորիայի կանոններ (PEFCRs):

### ԿՅԱՆՔԻ ՑԻԿԼԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՐԻ ԴԵՊԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Կյանքի ցիկլային մտածողությունը (LCT)<sup>3</sup> արտադրական գործընթացից վեր, արտադրանքի շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին մտածելու ամբողջական մոտեցում է: Դա պայմանավորված է LCT-ի կայուն պրակտիկայի բարելավման վրա կենտրոնանալով՝ բարելավելով արտադրական գործընթացները: Այն հանգեցնում է շրջակա միջավայրի վրա առավել նվազ բացասական ազդեցության և ռեսուրսների օգտագործման:

Արտադրական ցիկլի կազմակերպման գործում LCT-ն քիզնեսի համար կարող է դառնալ արդյունավետ գործիք: Այս համատեքստում LCA-ը (Կյանքի ցիկլային գնահատում) արտադրանքի կյանքի ցիկլի բնապահպանական կողմերի վերլուծական համակարգված մեթոդ է: LCA-ը հիմնված քանակական և հոսայի չափումների վրա (դեռևս առկա չէ կանոնակարգում)՝ ձեռք բերել բնապահպանական պիտակներ, կարող է աջակցել ընկերություններին հաղորդել արտադրանքի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները:

Այսպիսով, շնորհիվ շրջակա միջավայրի պահպանության մեծ ջանքերի՝ ձեռնարկությունները կարող են ունենալ տարբերվելու հնարավորություն: Ավելին, արտադրանքն առավել դրական ընկալում կունենա այն հաճախորդների շրջանում, որոնք փնտրում են էկոլոգիապես մաքուր ապրանքներ: LCA-ը կարող է նաև աջակցել քիզնեսին նվազեցնել ռեսուրսների օգտագործումը, շրջակա միջավայրի արտանետումները դարձնելով առավել կայուն, և օգնել բացահայտել ծախսերի հնարավոր խնայողությունները երկարաժամկետ հեռանկարում:

### ԿՅԱՆՔԻ ՑԻԿԼԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ (LCA) ԲԱՂԱԴՐԻՉ

Կյանքի ցիկլային գնահատումը (LCA) կյանքի ցիկլային մտածողության քանակական մոտեցումն է: Արտադրանքի և Կազմակերպության բնապահպանական հետքերը (ներդրված SMGP ծրագրի շրջանակում) LCA-ի կիրառմամբ նախատեսված են արտադրանքի և կազմակերպությունների կյանքի ցիկլի բնապահպանական արդյունավետությունը չափելու համար:

Action implemented by:



## ՈՒՐ ԴԵՊՈՒ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Կյանքի ցիկլային գնահատման ներդրման ճանապարհին քաղաքականություն մշակողների, բնապահպանական հաստատությունների, նախագծային գործառնությունների և արտադրանքի նախագծման մասնագետների ներգրավումն առանցքային նշանակություն ունի: Այն կօգնի ապահովել արտադրանքի էկոլոգիապես կայուն մշակումն ու օգտագործումը:

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԴԵՐԸ

### ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Կայունության պրակտիկաները հաջողությամբ կիրառելու համար՝ առանցքային է հզորացնել գիտական կենտրոնների և համապատասխան կազմակերպությունների (ՀԿ-ներ, գիտելիքի կենտրոններ, շահույթ չհետապնդող կազմակերպություններ, և այլն) կարողությունները և ստեղծել զարգացման նախադրյալներ ստեղծող էկոհամակարգ: Կարողությունների զարգացումն էական նշանակություն ունի, և այն պետք է ներգրավի բոլոր շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ գործարար ոլորտի, գիտական, քաղաքացիական հասարակական և պետական կառույցների ներկայացուցիչներին: Կարողությունների զարգացման ծրագրող պետք է մշակվի շահագրգիռ կողմերից յուրաքանչյուրի կարիքներին համապատասխան և իրականացվի տարբեր ձևաչափերով: Կարողությունների զարգացման ծրագրի հատուկ տարրերը պետք է ներառեն PEF նախագծումը և իրականացումը, երկուսն ընթացիկ ծրագրերի և նախաձեռնությունների միջև սիներգիայի ապահովումը, հավատարմագրող և սերտիֆիկացիաներ տրամադրող մարմինների կարողությունների զարգացումը, տեխնիկական աջակցության տրամադրումն ու կազմակերպություններին PEF մոտեցման ներդրման շուրջ աջակցությունը: SMGP նախաձեռնության նպատակներին հասնելու համար, հաստատությունները պետք է կիրառեն առկա փորձագետների ցանցի կարողություններն ու ստեղծեն ուժեղ սիներգիաներ:

### ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

SMGP-ի և PEF-ի իրազեկման բարձրացման ջանքերի հաջողությունն ապահովելու համար առանցքային է մանրակրկիտ պլանավորել և իրականացնել մի շարք միջոցառումներ, ապահովել համապատասխան փորձագետների և թիրախային լսարանի ներգրավվածությունն ու ստեղծել երկարաժամկետ ազդեցություն:

## ԴԱՌՆԱԼ ԱԶԳԱՅԻՆ PEF ՓՈՐՁԱԳԵՏ

Ապրանքների և ծառայությունների շրջակա միջավայրի վրա ազդեցությունները գնահատելու համար անհրաժեշտ փորձաքննություն ձեռք բերելն առանցքային է ապրանքի բնապահպանական հետքի (PEF) փորձագետ<sup>4</sup> դառնալու համար: Այն ներառում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմունքները, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի կողմից հաստատված LCA և PEF մեթոդաբանությունների իմացությունը: Այն նաև պահանջում է ծանոթ լինել արտադրանքի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մեթոդներին, ներառյալ ազդեցության դասակարգերին, և թե ինչպես են դրանք կիրառվում ապրանքների և ծառայությունների նկատմամբ: PEF փորձագետները պետք է նաև լավ տիրապետեն PEF-ին վերաբերող կանոններին և պահանջներին, իմանան, թե ինչպես են դրանք կիրառվում տարբեր ապրանքների և ծառայությունների նկատմամբ: PEF փորձագետները պետք է կարողանան շահագրգիռ կողմերին հակիրճ և հստակ բացատրել ընթացակարգերն ու ազդեցությունները, ինչպես նաև դրսևորեն պատասխանաբարձր և շարունակական վերապատրաստման և ուսուցման:

**Հաստատությունների և փորձագետների միջև համագործակցությունը ներառում է՝**

- Իրականացնել ելակետային ուսումնասիրություններ՝ թիրախային լսարանների մոտիվներն ու ներկա օրինաչափությունները հասկանալու համար
- Ապահովել թվային հարթակներում ներկայության միջոցներ (համագործակցել հեղինակավոր կազմակերպությունների հետ, ապահովել արձակների համահունչ լինելը ազգային քաղաքականությունների և այլ նախաձեռնությունների հետ):
- Ընտրված ոլորտներում SMGP և PEF մեթոդի ներդրման նպատակով ազդեցիկ ներկայություն ձևավորելու համար մշակել արդյունավետ հարողորգություններ մեխանիզմներ (հիմնական ուսումնասիրություններից ստացված տեղեկատվության հիման վրա) և ստեղծել շահերի պաշտպանության ռազմավարություն

### Ծանուցում

Այս հրատարակումը կազմվել է Եվրոպական միության աջակցությամբ: Սույնով արտահայտված տեսակետները բացառապես UNIDO-ի և պարտադիր չէ, որ արտահայտեն Եվրոպական միության պաշտոնական կարծիքը: Այս թողնակը պատրաստվել է առանց ՄԱԿ-ի պաշտոնական խմբագրման: Սույն թողնակում օգտագործված անվանումները և բովանդակությունը չեն ենթադրում որևէ կարծիքի արտահայտում UNIDO կողմից որևէ երկրի, տարածքի, քաղաքի կամ տարածքի իրավական կարգավիճակի կամ նրա իշխանությունների, կամ իր սահմանների, սահմանազատման, տնտեսական համակարգի կամ զարգացման աստիճանի վերաբերյալ: «Ջարգացած», «արդյունաբերականացած» կամ «գարգացող» անվանումները նախատեսված են վիճակագրական հարմարության համար և պարտադիր չէ, որ դատողություն արտահայտեն զարգացման գործընթացում որոշակի երկրի կամ տարածքի փոլում գտնվելու վերաբերյալ: Ընկերությունների անվանումները կամ առևտրային անվանումների հիշատակումը չի հանդիսանում UNIDO-ի կողմից հաստատում: Ներկայացված կարծիքները, թվերը և գնահատականները հեղինակների պատասխանատվությունն են և պարտադիր չէ, որ համարվեն UNIDO-ի և նրա անդամ պետությունների տեսակետների արտացոլումը կամ հաստատումը:

Շահագրգիռ խմբերի վրա ազդեցություն ունենալու համար գիտելիք ստեղծելը, փորձի փոխանակումը, փորձագիտական բազայի ստեղծումը և նրանց միջև արդյունավետ սիներգիաների ապահովումը հավասարապես կարևոր են:

- Հայաստանում կարելի է առանձնացնել հետևյալ հաջողված նախաձեռնությունները՝

- Ռեցրուցման արդյունավետ մաքուր արտադրություն (RECP) մեթոդաբանություն
- ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում (EU-GAIA)

## «ԵՄ-Ն ՀԱՆՈՒՆ ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիրը նպատակ ունի պահպանել և արդյունավետ օգտագործել բնական կապիտալը, բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունները և խթանել կանաչ տնտեսական աճը Արևելյան գործընկերության երկրներում: Ծրագրի նախաձեռնություններն օգնում են իրականացնել քաղաքականության և օրենսդրական փոփոխություններ, պլանավորել ու ներդրումները դարձնել առավել կանաչ, խթանել նորարարական տեխնոլոգիաների յուրացումը՝ ընդունելով նոր բիզնես մոդելներ և ստեղծելով կանաչ աշխատատեղեր: Դրա շրջանակներում, ըստ Արդյունք 2 բաղադրիչի, շրջանաձև տնտեսության և աճի նոր հնարավորությունների, UNIDO-ն պատասխանատու է հետևյալ արդյունքների համար.

**1. Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) ռեսուրսների արդյունավետ օգտագործում և ավելի մաքուր արտադրության ընդլայնում.**

- Ոլորտում ռեսուրսների արդյունավետության մասին կարողությունների զարգացում և իրազեկում
- Արտադրական ՓՄՁ-ների համար ռեսուրսների օգտագործման արդյունավետության և ավելի մաքուր արտադրության գնահատումներ
- Ձեռնարկությունների ռեսուրսների արդյունավետության և մաքուր արտադրության ակունքների ստեղծում
- Գոյություն ունեցող արդյունաբերական տեղամասերում Եվրոպական արտադրական պարկերի գաղափարի կիրառման իրագործելիության գնահատում
- Ընտրված մարզերում արդյունաբերական թափոնների քարտեզների մշակում

**2. 1. SMGP նախաձեռնության և PEF մեթոդաբանության հայեցակարգերի և գործիքների ներդրում և խթանում.**

- PEF խոչընդոտների և հնարավորությունների քարտեզագրում
- SMGP իրազեկման խթանում
- PEF կիրառման կարողությունների զարգացում
- PEF փորձարկում ընտրված ՓՄՁ-ներում

## ԻՆՏԵՆՍ Է «ԵՄ-Ն ՀԱՆՈՒՆ ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ» ԾՐԱԳՐԸ

Ծրագիրը տեղական շահագրգիռ կողմերին ավելի իրազեկ կդարձնի PEF-ի կիրառման հնարավոր օգուտների և ազդեցության մասին, կստեղծի տեղական կարողություններ EaP տարածաշրջանում, կօգնի ազգային արդյունաբերություններին ավելի լավ պատրաստված լինել հնարավոր քաղաքականությունների համար՝ ներառյալ PEF-ը, և կապահովի ուսուցման հնարավորություններ տեղական փորձագետների համար՝ օգտագործելով այնպիսի ուսումնասիրությունները և կոնկրետ առաջարկներ ներկայացնելով ավելի կայուն արտադրության համար: Բացի այդ, ԵՄ-ն և UNIDO-ն կներառեն տեղական իրազեկման և կարողությունների զարգացման գործողություններ, որոնք կկապաստեն և ավելի լայնորեն կաջակցեն «կանաչ» ջանքերին և քաղաքականություններին:

- [1,2] Source: [www.ec.europa.eu/environment/eusdd/smgp/pdf/EF%20simple%20guide\\_v7\\_clen.pdf](http://www.ec.europa.eu/environment/eusdd/smgp/pdf/EF%20simple%20guide_v7_clen.pdf)
- [3] Source: [www.epca.jrc.ec.europa.eu/uploads/LCT-Making-sustainable-consumption-and-production-a-reality-A-guide-for-business-and-policy-makers-to-Life-Cycle-Thinking-and-Assessment.pdf](http://www.epca.jrc.ec.europa.eu/uploads/LCT-Making-sustainable-consumption-and-production-a-reality-A-guide-for-business-and-policy-makers-to-Life-Cycle-Thinking-and-Assessment.pdf)
- [4] Խնդրում ենք նկատի ունենալ, որ ընթացիկ նախագիծը չի վերապատրաստում և չի պատրաստում ԱԲՀ փորձագետներ: Փոխարենը՝ այն ներկայացնում է ԱԲՀ-ն համապատասխան ոլորտների առկա փորձագետներին (կայունություն, բնապահպանական կատարում, ԿՑԳ, կանաչ մարքեթինգ և այլն):
- [5] Source: [https://ec.europa.eu/environment/eusdd/smgp/pdf/EF%20simple%20guide\\_v7\\_clen.pdf](https://ec.europa.eu/environment/eusdd/smgp/pdf/EF%20simple%20guide_v7_clen.pdf)

### Կոնտակտային տվյալներ

ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպություն  
«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիր  
Ղեկավար Տալլանա Չերնյակսկայա  
Հեռ: +43 1 26 0 26 5520  
Էլ. փոստ: t.chernyavskaya@unido.org  
Կայք: www.unido.org